ԿԱՐԾԻՔ

Հայկազուն Ալվրցյանի «Գանձարանային տաղի խորհրդանշանը» դոկտորական ատենախոսության մասին

Ատենախոսության մասին կարծիքը նպատակահարմար եղավ կազմել բովանդակության ու կառուցվածքի տրամաբանությանը հետամուտ, ըստ այդմ դիտարկել գիտավերլուծական ընդհանրացումները և գրական նյութի շրջանառման հաճախականությունը: Դրա պառճառներից մեկն այն է, որ աշխատանքի առաջին երեք գլուխները շատ ավելի իմաստասիրական - աստվածաբանական, նաև պատմաբանասիրական քննություններ են, որտեղ կարծես քիչ տեղ է տրվում խորհրդանշանի կիրառության օրինակներին. ատենախոսն ինքը նշում է, որ դա պետք է արվի հետո՝ «...խորհրդանիշների մասին հանգամանալից խոսելու ենք չորրորդ գլխում» (էջ 55): Եվ որքան էլ հասկանալի է, որ ծավալուն սկիզբը նպատակ ունի բուն նյութի կատարման տեսական-աստվածաբանական միջավայրը ապահովել, մանավանդ տաղերի վերլուծությունը մինչ այժմ առավելապես կատարված է եղել այլ սկզբունքներով, միևնույն է, մնում է որոշ երկարաբանության տպավորությունը, որը միայն հետագայում՝ վերլուծության որոշակիությունների մեջ է հաղթահարվում, և հիմնավորվում է այսպիսի կառուցվածքի նպատակահարմարությունը:

Ատենախոսության «Ներածությունը» թեմայի գիտաարդիական հնչեղությունը հիմնավորում է նրանով, որ տաղը ընդհանրապես քննվել է բովանդակային գեղարվեստական առումով, բայց ոչ ծիսակարգային-աստվածաբանական համատեքստում՝ որպես քրիստոնեական վարդապետության արտահայտիչ, այն դեպքում, երբ այն պետք է դիտել նաև որպես «աստվածհայտնության բացահայտման» միջոց:

Առաջին գլուխը, բնական է, որ թեմայի ընդգրկուն ամբողջացման նպատակով պետք է ներկայացներ խորհրդանշանային մտածողության, կարելի է ասել, ծագումնաբանությունը, հեթանոսական շրջանի գրավոր սակավաթիվ օրինակների՝ Խորենացու ավանդով մեզ հասած առասպելների, Գողթան երգերի մեջ կրոնական աշխարհայացքի բերած այլաբանական մտածողությունը, երբ ամեն ինչ

մարդկայնացնելու միտումը նյութական աշխարհը ընկալում է որպես առասպելական: Վահագնի երգի ամբողջական մեջբերումից հետո արված է դիտարկում, թե վիշապներին հաղթողի, ամպրոպի և կայծակի աստծո ծնունդի հետ կապված «երկունքի ցավերը պիտի լինեին բոցեղեն» (էջ 24): Այլաբանական մտածողության ակունքի բացահայտման առումով ցանկալի է, որ բացվեր «երկին»-օդ, «երկիր»-հող, «ծովն»-ջուր, «հուր-բոց»-կրակ չորս նախաստեղծ տարրերի խորհրդանշանային ընդգրկումը. կամ՝ «բոց մօրուս» ունեցող «պատանեկիկ»-ի մեջ կարելի է տեսնել «մանուկ» քրիստոնեական ընդգրկուն խորհրդանիշի ակունքը՝ «մանուկի» հոգևոր մաքրությանն ու իմաստնությանը նախորդող «պատանեկիկի» մարմնական շեշտադրումներով:

Անցում է արվում քրիստոնեական բանաստեղծության մեջ ևս կրոնական այլաբանական մտածողությանը, որտեղ կրկնաբան ծավալումներ կան քրիստոնեության մուտքի ու տարածման դժվարությունների՝ հունարենի և ասորերենի դերի, Մաշտոցի առաքելության, 5-րդ դարի մշակութային վերելքի մասին՝ բազմաստվածությունից միաստվածության անցումի աստվածաբանական իմաստավորումով: Այս միջավայրում է ներկայացվում հոգևոր երգի սկզբնավորման փաստը: Գանձարան ժողովածուի ծիսակարգային էությունն ու կրթա-դաստիարակչական նպատակը կապվում է շարականների և Շարակնոցի նույն դերի հետ, այդ գործառույթը ամբողջացնելու համար կրկին մանրամասն անդրադարձ է արվում հայ եկեղեցու և նրա վարդապետության ինքնության պայքարին, Քաղկեդոնի և այլ կրոնական ժողովներին (էջ 39-45)՝ հաստատելու համար, որ «դավանաբանական պայքարը արտացոլվել է նաև հոգևոր երգերում»: Շարականների խորհրդանշանի համառոտ անդրադարձի մեջ ճիշտ և հետագա համեմատության համար խոսուն եզրահանգում է այն, որ խիստ կանոնական բնույթը պատճառաբանում է «շարականների ձևի, նյութի, բովանդակության և լեզվի միակերպությունը» (էջ 49): Համեմատությամբ ընդգծվում է գանձերի ու մանավանդ տաղերի հարուստ խորհրդանշանային բովանդակությունը և սկզբնավորման ու կատարման մեջ Գ. Նարեկացու մեծ առաքելությունը:

Ատենախոսության երկրորդ գլխում («Գանձարան ժողովածուի գործառույթները: Գանձարանային տաղի լեզուն, ձևը և խորհրդանշանը»)

ատենախոսը, դիպուկ շրջանառելով կրկին կողմնակի հարուստ գրականություն՝ միջնադարի մեկնիչների ու աստվածաբանների երկերից մինչև բանասիրական ու գրականագիտական դիտարկումներ, ընդհանրացումների մեջ բացում է Շարակնոցից ու Ժամագրքից հետո Գանձատետր-Գանձարանի գանձերի, տաղերի, փոխերի, մեղեդիների կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկությունները, ծիսակարգային գործառույթին զուգահեռ՝ խորհրդանշանային ու պատկերային արտահայտչամիջոցների հարստությունն ու ինքնատիպությունը (վերոնշյալ ժողովածուների հետ համեմատած): Կարծում ենք՝ ատենախոսի վերաբերմունքը կտրուկ է, երբ չի ընդունում, որ տաղը, Գանձարանի ծիսակարգային գործառույթի մեջ լինելով հանդերձ, ինքնուրույն բանաստեղծության հատկանիշների, ավելի ճիշտ՝ բանաստեղծության ինքնուրույնացման առաջին քայլն է նաև, և գտնում է, որ տաղը պետք է միշտ դիտվի գանձի հետ (Ճիշտ է, որ գործառույթով այն գանձի որոշ էպիկական պատումի քնարական ամբողջացումն է, բայց նաև նույնքան ինքնուրույն է): Այս առիթով հասկանալի է, բայց գուցե արդեն հարկ չկա երկար վեճ ունենալ տաղը միայն աշխարհիկ բանաստեղծություն համարող նախորդների հետ, որոնց հայացքներում ժամանակի գաղափարական ճնշումը ակնհայտ է, և դրանք կարելի է հնացած համարել:

Համենայն դեպս, ատենախոսը տաղը բնութագրում է որպես «նոր բանաստեղծություն», որը «լեզվի, ձևի, խորհրդանշանի» հարստությամբ կոչված է լինելու «քրիստոնեական ուսմունքի տարածման... ամենազանգվածային ու ազդեցիկ միջոցը» (էջ 81. բնութագրման վերջին հատվածը արվեստի հատկանիշն է. - Վ.Ս.), որը պետք է ժողովրդի հիշողությունից «ջնջեր հեթանոսական շրջանի կռապաշտական երգը»: Եվ Ավերինցևի հետևողությամբ նշվում է, թե այդ գործառույթի բերումով «անտիկ պոեզիային բնորոշ պերճախոսությունը,... երբեմն էլ վեհ կամ վերամբարձ ոճն ու ձևերի բազմազանությունը չէին կարող ընդօրինակման աղբյուր լինել վաղմիջնադարյան ասկետիզմի» (էջ 82), ուրեմն և հոգևոր երգերի համար: Իսկ տաղի մեջ դիտարկում է խորհրդանշանների այսպիսի իմաստային խմբեր ու անցումներ. 1) Երկնքից (Հայր-Որդի-Հոգի-հրեշտակներ) Երկիր (մարգարե-առաքյալ-եկեղեցի-հավատավոր...) և Տնօրինություններ (Ծնունդ-Հայտնություն-Հարություն- Համբարձում): 2) Խորհրդանշանն արտահայտվում է տեսանելի

առարկաներով՝ Երկնային (արփի-լուսին-աստղ-ամպ...), Երկրային (բույս-ծաղիկ-պտուղ-թռչուն...), Բնության երևույթ (քամի-անձրև-ձյուն-լուսանալ-մթնել...), Տարվա եղանակներ, Ծեսեր-հանդեսներ (հարսանիք-խնջույք-թաղում...), Գույներ, Թվեր, Անուններ:

Ատենախոսության երրորդ գլխում խորհրդանշանի տեսական-գաղափարական հիմքերը, ակունքները, ընկալումը քննվում են կրկին Ս.Գրքի և մեկնաբանական- աստվածաբանական աշխատությունների զուգահեռների մեջ՝ տեսական գրականության ներառումներով: Խորհրդանշանի վերոնշյալ խմբավորումները մեկնաբանվում են Ստ. Սյունեցու, Ն.Շնորհալու,Գ. Տաթևացու և այլոց հղումներով, որոնք ամբողջացնելու միտում ունեն Գ.Նարեկացու «Երգ երգոցի» մեկնությունների ընդհանուր գնահատումները (կոնկրետը պետք է ներառվի հաջորդ գլուխներում): Այստեղ սողոսկել է վրիպում. Նարեկացու Մեկնության պատվիրատու Գուրգեն Արծրունու անունը մի տեղ նշվել է՝ «Գագիկ Արծրունի արքան...» (էջ 107), մի այլ տեղ՝ «Վասպուրականի Գրիգոր Արծրունի թագավորը...» (էջ 113. երկուան էլ նշանավոր պատմական անձեր են):

Խորհրդանշանի ընկալումների մեջ շեշտադրվում է այն, որ «Ամեն իր և արարած Աստծուն ճանաչելու համար է», որն արվելու է այլաբանական ընթացքի մեջ, ուստի խորհրդանշանը նյութական աշխարհ-հոգևոր աշխարհ անցումի կրողն է, Հովհ. Օձնեցու ձևակերպմամբ՝ «մենք չենք պաշտում Խաչի նյութը, այլ... Խաչի նշանը»՝ Աստծու Միածին Որդուն: Իսկ խորհրդանշանը «քչերին է հասու ոչ թե այն պատճառով, որ մշուշված է գաղտնածիսության խորհրդավորությամբ, այլ որ անճառելին՝ Աստծո խոսքը, սահմանված չէ «տկար լսելեաց» համար» (էջ 129): Եվ կրկին Նարեկացին է հայ հոգևոր բանաստեղծության առաջին տեսաբանն ու համակարգողը, որի արժանավոր հաջորդն է Ն. Շնորհալին, որոնց հղումները անընդհատ պիտի զուգակցվեն թեմայի վերլուծությանը՝ կատարման մեջ պահպանելով խնդրին առնչվող և արդեն ներկայացված տեսական ընդհանրացումների համադրությունը: Քննելիք նյութի գիտագործնական միջավայրն այսպես ամբողջացնելուց հետո ի վերջո գալիս է կոնկրետ վերլուծությունների բուն խնդրի կատարումը:

Չորրորդ գլխում՝ «Հոգևոր խորհրդանշանը և խորհրդաբանության արտահայտությունը գանձարանային տաղերում» քննությունը կատարվում է

խորհրդանշանների վերոնշյալ խմբավորումներով (ավելացրած «հեղինակային խորհրդանշանները»), և աշխատանքի այս բաժինը ավարտվում է «բաղաձայնույթի և խորհրդանշանի երկակի բնույթի» վերլուծությամբ: Ասելիքի ամբողջացման հիմունքներ են դառնում Նարեկացու «Վարդավառի» և «Հարության» տաղերը, «Մեղեդի ծննդյան»-ը՝ համադիր այլ օրինակներով:

Անմիջապես զգալի է խորհրդանշանի մեկնաբանության հետ կապված մի դժվարություն, որ հաղթահարված է ատենախոսի կողմից: Դա խորհրդանշանի բովանդակային առաձգականացման հնարավորությունն է, որի հաղթահարման միջոց է զուգահեռ օրինակը: Այսպես. «Գոհար վարդն վառ առեալ»-ի հիմունքով «Վարդը որպես Հիսուսի խորհրդանշան» (էջ 152) հիմնավորվում է այլ տաղից՝ «Ճեմ կուսինածոց ծաղիկ, վարդ փթթեալ ի գիրկս մայր» հղումով, նաև Կ. Երզնկացու ուղղակի նշումով, որի յուրօրինակ կրկնությունն է Մ. Նաղաշի բերած պատկերը՝ «Ծաղիկն որ հետ նոցին //այն Յիսուսն էր հոր միածին», թեպետ Նաղաշը, ի տարբերություն նախորդի հստակ նշումի, չի գրում, որ այդ միակ ծաղիկը վարդն է: Տիպաբանական զուգահեռի մեջ ներառվում են նաև եվրոպական գրականության օրինակներ (Ափրոդիտեին նվիրած սիրո նշան վարդը, վարդը՝ նաև Աստվածամոր խորհրդանիշ), Արևելքի պոեզիայում Վարդի և Բլբուլի՝ շատ ավելի երկրային ընկալումները:

Գիտավերլուծական այս ընթացքը, որը բնորոշ է նաև մյուս խորհրդանշանների հոգևոր մեկնություններին, երբեմն կարող է նաև շատ վերացարկված երևալ: Օրինակ՝ այստեղ շուշանի խորհրդանիշը մեկնաբանվում է այնպես, որ այդ ծաղիկը այլաբանում է այն մարդկանց, ում «հոգիները բնակության վայր է Տիրոջ համար,... փթթում ու շողում են Աստծո (արեգակի) դեմ» (էջ 174), որը, որպես ընդունելի տարբերակ, տեղ է թողնում այլ մեկնությունների համար ևս:

Թռչունների խորհրդանշանի վերլուծումների մեջ հստակվում է մի այլ դիտանկյուն՝ խորհրդանշանների զուգահեռ գործածության ընդհանրության հիմքը բացել բնորոշ հատկանիշներով: Այսպես. տատրակը (որ աղավնու տեսակ է) սոխակի հետ միասին դառնում է Քրիստոսի գալստյան ավետաբերը, իսկ նրանց կապը և տիպական հատկանիշը «կարմրոտն, կարմրակտուց», հավատարիմ լինելն է. «Հովհաննես Մկրտիչը՝ որպես Քրիստոսի գալստյան ավետաբեր, տատրակի

կերպարով է» (էջ 194) ներկայացվում: Նույն հիմունքով են մեկնաբանվում «Հարության» տաղի «կորնկան, մանուշակ» խորհրդանշանները՝ կորնկանի բնորոշ հատկանիշ համարելով մեղրատու լինելը («մեղրը Քրիստոսի վարդապետությունն է», էջ 242), իսկ մանուշակը՝ որպես գարնան ու զարթոնքի նշան, հարության խորհրդանիշն է: Այս ընկալելի մեկնությունների կողքին շատ վերացարկված են թվում «սաթ և սպիտակ» եզների՝ որպես գիշերվա ու ցերեկվա խորհրդանիշի փոխարեն ատենախոսի ընկալումներով սաթ եզը որպես Հին կտակարանի և սպիտակը որպես Նոր կտակարանի այլաբանումները:

Ընդհանրապես «Հարության» տաղը ուրույն նշանակություն ունի «հեղինակային խորհրդանշանների» ներառումով, վերջում տրված մեկնությամբ միակը լինելով, ինչը ատենախոսին հիմք է տալիս եզրակացնելու հետագա միջամտությունների մասին և այդ առիթով կատարելու բանասիրական դիտարկումներ: Այլաբանությունների երեք շրջանաբաժանումներով (Մասիսը խորհրդանշում է «մարդկային ցեղի վերածնունդը», «Սայլը խորհրդանշում է տապանակը՝ օրենքի շրջանը, իսկ Քրիստոսը՝ արարչագործության լրումը, այսինքն՝ Աստծո տաճարի ամբողջացումը՝ սիրո շրջանը», էջ 236) և բարձր վերացարկման մեջ համոզիչ թվալով՝ ատենախոսը եզրակացնում է, որ դրանք ոչ թե Հիսուսի, այլ հավատավոր «մարդու հոգևոր հարությունն են խորհրդանշում» (էջ 238), ահա թե ինչու տաղը ներառված չէ Գանձարանում:

Այլաբանության բարձր վերացարկման մեջ ատենախոսի վստահ համոզչությունն է զգացվում նաև «Մեղեդի ծննդյան»-ի խորհրդանշանները մեկնաբանելիս: «Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ»-ի մեջ տեսնում է եկեղեցու ծոցը-ավազանը, «գեղեցիկ պատմուճանը» քահանայապետի հանդերձն է, զարդեղենը՝ Աստծո պատվիրանները, քայլքը՝ «եկեղեցու ընթացքը» (էջ 213), և ուրեմն՝ «Նարեկացին Տիրամոր կերպարի արտաքին նկարագրով այլաբանորեն պատկերել է եկեղեցին» (էջ 211):

Այսպես հիմնավոր ու համոզիչ, նաև երբեմն դժվարընկալելի բարձր վերացարկումներով, որ նյութի օբյեկտիվ բնութագրիչներից է, վերլուծությունը ներառում է բաղաձայնույթի բանաստեղծական հնարանքի անդրադարձը, և վերջում արվող եզրակացությունը, թե «խորհրդանշանի երկակի բնույթի» մեջ պետք է նախ

ընկալվի հոգևոր այլաբանությունը, հետո նոր՝ մակդիրը, ատենախոսության կառուցվածքի տրամաբանությունը հինգերորդ գլխում հասնում է «Հոգևոր խորհրդանշանի աշխարհականացման» քննությանը:

Գանձարանային տաղի գոյատևման հինգ դարերը ամփոփելով 15-րդ դարում՝ ատենախոսը այս շրջանի Հայոց պատմաքաղաքական անկումների, եկեղեցուն և հոգևոր մշակույթին հասած հարվածի և դրանց դիմակայություն դարձած վանական դպրոց-համալսարանների մասին անդրադարձում շեշտում է գիտամշակութային ու գրական կյանքի պահպանման փաստը՝ ի դեմս նաև միջնադարի տաղերգության: Ենթատեքստում զգալի է դառնում մի վերապահում. ատենախոսը կարծես թե մշակութային նահանջ է համարում այն, որ հոգևոր խորհրդանշանը «այլակերպվում է» աշխարհիկի, որի զարգացման մեջ արդեն դեր են խաղում ժողովրդական երգը՝ «հայրենները, գուսանական (թե՞ աշուղական- Վ.Ս.) երգերը»:

Այս անցումի մեջ կարևորվում է Կ. Երզնկացու դերը, որը գարնան, սիրո, վարդի ու սոխակի նաև այլաբանական տաղեր էր գրում (ատենախոսի վերապահումով՝ «աշխարհիկ իմաստով գործածված խորհրդանշանները թվով շատ քիչ են», էջ 297): Նույն կերպ հաստատելով, թե Հ. Թլկուրանցին «բովանդակազրկում է հոգևոր խորհրդանշանը՝ նրան տալով աշխարհիկ բովանդակություն», այս հանգամանքը մեղմում է այն դիտարկմամբ, որ Թլկուրանցին «հմուտ էր նաև հոգևոր խորհրդանշանի գործածության մեջ»: Բայց խորհրդանշանի հոգևոր այլաբանությունը մեծ տեղ ունի 16-րդ դարի կաթողիկոս-բանաստեղծ Գ. Աղթամարցու տաղերում, իսկ 17-րդ դարի տաղերգու Պաղդասար Դպիրի «Տաղ գարնան» այլաբանական գործի հինգ տունը մեջբերված է ամբողջությամբ:

Որոշակի է, որ ատենախոսության բուն նպատակը գանձարանային տաղի խորհրդանշանների հոգևոր-այլաբանական մեկնություններն են, որ արվել են տեսական-գործնական խորքային վերլուծությամբ: Զարգացման նույն տրամաբանությամբ հասկանալի է նաև աշխարհականացման ընթացքը: Այժմ ոչ միայն հնացած, այլև անլուրջ կլինի Նարեկացու տաղերը հեռացնել հոգևոր-խորհրդանշանային բովանդակությունից, համարել միայն աշխարհիկ: Բայց պետք է հավասարապես շեշտել նաև այն, որ կանոնականից դուրս ինքնատիպությամբ հատկանշվող պատկեր-խորհրդանիշների ազդեցությամբ հաջորդ դարերում տաղը

բովանդակային ընդգրկումներով (սոցիալական, քաղաքական, գարնան ու բնության, սիրո, նաև խոհախրատական) դառնում է գեղարվեստական գրականության ***ժանրային*** ինքնուրույնացման հայտանիշ, հաճախ հոմանիշվում բանաստեղծությանը: Այս կերպ մեծ սկզբնավորող է դառնում սրբանշան կրոնավոր Գրիգոր Նարեկացին:

Ավարտելով մեր խոսքը՝ նկատենք, որ ատենախոսության Եզրակացությունները ամփոփում են ամբողջ ասելիքը, Սեղմագիրը ներկայացնում է գիտավերլուծական դրույթներն ու բովանդակության կառուցվածքային ընդգրկումը: Նյութի ընդգրկման խորությունն ու գիտաարդիական հնչեղությունը, վերլուծության մշակութաբանական, աստվածաբանական-մեկնողական, պատմաբանասիրական ու գրականագիտական սկզբունքները, հիմնավոր եզրահանգումները, հարուստ գրականության շրջանառումը հաստատում են, որ «Գանձարանային տաղի խորհրդանշանը» աշխատանքը լիովին բավարարում է դոկտորական ատենախոսությանն առաջադրվող պահանջները, և նրա հեղինակ Հայկազուն Ալվրցյանը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս բանասիրական գիտ.
դոկտոր պրոֆեսոր Վ. Սաֆարյան
25.05.2021